ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №ՄԱԾՁԲ-21-2-2

ք. Երևան 06.07.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «ԵՐՄԳՀԻ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ №37 զինվորական ներկայացուցչության կողմից տված եզրակացության հիման վրա: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 6 973 000 (վեց միլիոն ինը հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին (եռամսյակներին): Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500707770077
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00001672
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Գլխավոր տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՄԱԾՁԲ-21-2-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկան	Տեխնիկական ցուցանիշներ
1	էլեկտրոնային վարժասարքերի նորոգում (Նշանակետ, Նշանակետ-ՄՄ, Վրիժառու վարժասարքերի նորոգում)	Համաձայն վարժասարքերի շահագործման ձեռնարկի պահանջների, վարժասարքերի աշխատունակության լիովին ապահովում՝ նորոգել (անհրաժեշտության դեպքում փոխարինել) ԱԿ-74 ինքնաձիգով, ԴԴՀ դիպուկահար հրացանով, ՁՀՆ-7 նռնականետով հրաձգություն վարելու ուսուցման համար նախատեսված <Նշանակետ>, <Նշանակետ-ՄՄ> և <Վրիժառու> վարժասարքերի անսարք սարքերը և հանգույցները:

Ծանոթություն՝

Նորոգման ընթացքում փոխարինվող սարքավորումները (դետալները) պետք է լինեն նոր և չօգտագործված, ձեռք են բերվում նորոգումն իրականացնող կազմակերպության կողմից:

Նորոգումն իրականացվում է ՀՈՒ ՊԳՎ հայտերի համաձայն, կազմակերպության արտադրամասում կամ վաժասարքի շահագործման վայրում:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Անվանումը	չ/մ	Նորոգման ծառայությունները ըստ ՊԳՎ հայտերի՝ 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.
1	**էլեկտրոնային վարժասարքերի նորոգում** (Նշանակետ, Նշանակետ-ՄՄ և Վրիժառու վարժասարքերի նորոգում)	դրամ	6,973,000 (Առավելագույն գումարը)
	Նորոգման ծառայությունների համար անհրաժեշտ մասերի (պահեստամասերի) ցանկ		
Հ/հ	Ապրանքի անվանումը	չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)
A4 Ֆորմատի տպիչ սարք			
Այդ թվում՝			
1	*Տպիչ սարք*	հատ	49,000
2	*Ակուստիկ համակարգ*	հատ	16,500
USB-COM կերպարափոխիչ			
Այդ թվում՝			
3	*USB-COM կերպարափոխիչ*	հատ	10,500
Թվային ընդունող սարք (ԹԸՍ)			
Այդ թվում՝			
4	*Թվային ընդունող սարք*	հատ	180,000
5	*Օբյեկտիվ*	հատ	80,000
Արտապատկերման սարք (ԱՍ)			
Այդ թվում՝			
6	*Արտապատկերման սարք*	հատ	298,000
7	*ԱՍ-ի լամպ*	հատ	84,000
Ուժեղացուցիչ բաշխիչ սարք			
Այդ թվում՝			
8	*Ուժեղացուցիչ բաշխիչ սարք*	հատ	23,000
9	*Օդասեղմիչ*	հատ	58,000
ԱԿ-74 և ԴԴՀ նմանակիչ			

Այդ թվում՝			
10	*Էլեկտրամագնիսական փականի պատրաստման համար անհրաժեշտ նյութեր*	հատ	6,000
11	*Լազերային մոդուլ*	հատ	26,800
12	*Օպտիկական զույգի հանգույց պատրաստման համար անհրաժեշտ նյութեր*	հատ	10,000
Հրազենների նմանակիչների սնուցման բլոկ			
Այդ թվում՝			
13	*Ղեկավարող տպասալիկի փոխարինման համար անհրաժեշտ նյութեր*	հատ	40,000
14	*TAH-1-220 տրանսֆորմատոր*	հատ	8,600
«ՁՀՆ-7» նմանակիչ			
Այդ թվում՝			
15	*Լազերային մոդուլ*	հատ	26,800
16	*Ղեկավարող տպասալիկ*	հատ	39,800
17	*3DPRO ջոստիկ*	հատ	38,000
18	*3,7 V-800MA կուտակիչ մարտկոց*	հատ	5,040
19	*5V1A լիցքավորման սարք*	հատ	3,000
20	*Լիցքավորման բնիկ*	հատ	600
21	*Լուսադիոդ*	հատ	960
22	*Ալեհավաք*	հատ	19,800
Կրոնշտեյն			
Այդ թվում՝			
23	*Ճշտադրման մեխանիզմ*	հատ	16,500
Պատի էկրան			
Այդ թվում՝			
24	*Պատի էկրան*	հատ	102,000
Նորոգման ծառայությունների համար անհրաժեշտ ծառայությունների ցանկ			
Հ/հ	Ապրանքի անվանումը	չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)
Համակարգչային բլոկ			
Այդ թվում՝			
25	Համակարգչային բլոկի ծրագրային ապահովում	հատ	62,160
26	*HDD վինչեստրի փոխարինում*	հատ	33,630
USB-COM կերպարափոխիչ			
Այդ թվում՝			
27	*USB-COM կերպարափոխիչի փոխարինում*	հատ	20,970
28	USB-COM Կերպարափոխիչի վերանորոգում	հատ	7,200
Թվային ընդունող սարք (ԹԸՍ)			
Այդ թվում՝			
29	ԹԸՍ-ի սնուցման տպասալիկի վերանորոգում	հատ	36,960
30	ԹԸՍ-ի ղեկավարող տպասալիկի վերանորոգում	հատ	36,960
31	*ԹԸՍ-ի փոխարինում*	հատ	216,000
32	*Օբյեկտիվի փոխարինում*	հատ	15,580
Արտապատկերման սարք (ԱՍ)			
Այդ թվում՝			
33	*ԱՍ-ի փոխարինում*	հատ	95,360
34	ԱՍ-ի սնուցման բլոկի վերանորոգում	հատ	36,000
35	*ԱՍ-ի լամպի փոխարինում*	հատ	11,820
Ուժեղացուցիչ բաշխիչ սարք			
Այդ թվում՝			
36	Ուժեղացուցիչ բաշխիչ սարքի փոխարինում	հատ	7,360

37	Օդասեղմիչի վերանորոգում	հատ	61,290
38	Օդասեղմիչի փոխարինում	հատ	18,560
АК-74 և ԴԴՀ նմանակիչ			
Այդ թվում՝			
39	*Էլեկտրամագնիսական փականի պատրաստում և փոխարինում*	հատ	48,150
40	*Լազերային մոդուլի փոխարինում*	հատ	56,660
41	*Օպտիկական զույգի հանգույցի պատրաստում և փոխարինում*	հատ	38,750
42	Մեխանիկական անսարքությունների վերացում	հատ	4,080
Հրազենների նմանակիչների սնուցման բլոկ			
Այդ թվում՝			
43	Ղեկավարող տպասալիկի պատրաստում և փոխարինում	հատ	31,280
44	Ղեկավարվող տպասալիկի վերանորոգում	հատ	53,640
45	ТАН-1-220 տրանսֆորմատորի փոխարինում	հատ	8,350
«ՁՀՆ-7» նմանակիչ			
Այդ թվում՝			
46	Լազերային մոդուլի փոխարինում	հատ	56,660
47	Ղեկավարող տպասալիկի փոխարինում	հատ	106,600
48	Ղեկավարող տպասալիկի վերանորոգում	հատ	43,920
49	3DPRO ջոստիկի փոխարինում	հատ	1,600
50	3,7 V-800MA կուտակիչ մարտկոցի փոխարինում	հատ	13,020
51	5V1A լիցքավորման սարքի փոխարինում	հատ	1,200
52	Լիցքավորման բնիկի փոխարինում	հատ	8,700
53	Լուսադիոդի փոխարինում	հատ	9,600
54	Ներկապատում	հատ	21,060
55	Ալեհավաքի փոխարինում	հատ	2,640
56	Ադապտորի վերանորոգում	հատ	22,080
57	Մեխանիկական անսարքությունների վերացում	հատ	4,140
Կրոնշտեյն			
Այդ թվում՝			
58	Ճշտադրման մեխանիզմի փոխարինում	հատ	2,520
Պատի էկրան			
Այդ թվում՝			
59	Պատի էկրանի փոխարինում	հատ	6,000
Այլ ծախսեր			
Այդ թվում՝			
60	Վերանորոգման ենթակա բաղադրիչ մասի ընդունում, անսարքության թեսթավորում, փաստաթղթային ձևակերպում «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	24,750
61	Վերանորոգված բաղադրիչ մասի ստուգում, ստենդի կազմում «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	34,890
62	Ծրագրային ապահովման վերականգնում և ստուգում «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	62,160
63	Լարք (ճշտադրում, կոորդինատների համակցում (калибровка), նշանափորձում) «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	48,090
64	Վարժասարքի համալիր կարգաբերում և հանձնում պատվիրատուի ներակայացուցչին «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքում	հատ	72,420
65	Վերանորոգված համալիրի փաթեթավորում	հատ	24,750
66	Համալիրի բացազատում, տեղադրում և մոնտաժ շահագործման վայրում	հատ	62,700
67	Վարժասարքի համալիր կարգաբերում շահագործման վայրում	հատ	65,220

68	Լարք (ճշտադրում,կոորդինատների համակցում (калибровка), նշանափորձում) շահագործման վայրում	հատ	78,300
69	Ծրագրային ապահովման վերականգնում և ստուգում շահագործման վայրում	հատ	91,800
70	Բաղադրիչ մասերի անսարքության թեսթավորում շահագործման վայրում	հատ	180,000
71	ՈՒսուցում շահագործման վայրում	հատ	33,120

Ծանոթություն՝

1. Նորոգման ծառայությունների վճարումը կատարել փաստացի ծախսերի գնահաշվարկով:

Հավելված N 2
ՄԱԾՁԲ-21-2-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ., ընդ որում՝	
Հ/հ	անվանումը	CPV կոդը	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	էլեկտրոնային վարժասարքերի նորոգում (Նշանակետ, Նշանակետ-ՄՄ, Վրիժառու վարժասարքերի նորոգում)	50892100/1	3 500 000	6 973 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՄԱԾՁԲ–21-2-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
ՄԱԾՁԲ–21-2-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն